

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

**«ՆՈՐ ՏԵՏՐԱԿ ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է ՀՈՐԳՈՐԱԿ», ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԲՆԱԳՐԻՑ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Պ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ. ԵՐԵՎԱՆԻ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 1991 Թ., 260 էջ:**

«Ուսանողի գրադարան» մատենաշարով հայոց հասարակության ուշադրությանը ներկայացվող XVIII դարի հայ քաղաքական և լուսավորական մտքի այդ երախայրիքը՝ իր մեծապես արդիական հնչողությամբ, արծարծած հայրենասիրական և ազատասիրական գաղափարներով, հայրենամովիտության անկեղծ տոգորմամբ, հիրավի, անգնահատելի ընծա է հայ երիտասարդությանը: Ելնելով մեր ժողովրդի պատմական անցյալը ճանաչելու, այդ անցյալից ապագայի համար դասեր քաղելու անհրաժեշտության հիմնադրույթից, «Հորդորակը», անկասկած, դարակազմիկ երևույթ էր 18-րդ դարի հայոց վայրկվերումներով առատաշատ պատմության մեջ: Կրքտու կոչ լինելով հանդերձ հայ երիտասարդությանն ու պատանհաններին՝ մեկընդմիջտ արթնանալու ծուլության ու անտարբերության մահաբեր թմբիրից և ձեռք զարկելու հայրենի սլետականության վերանորոգման ու հայրենյաց Հայաստանի ազատագրության նվիրական ու վեհ գործին, «Հորդորակը» միաժամանակ պատմագիտական, տնտեսական ու փիլիսոփայական հիմնադրումն էր այդ բաղձալից նպատակների կենսագործման անհրաժեշտության: «Հորդորակը» հեղինակը քաջ գիտակցում է, որ ստրկացված հայրենիքի ազատագրության դժվարին, քայց անձկայի գործին իր անձը բոլորանվեր կարող է նվիրաբերել միայն այն երիտասարդը, ով քաջաժանոթ է հայրենյաց Հայաստանի պատմությանն ու աշխարհագրությանը, և այդ հիման վրա գիտակցում է, որ սնհանդուրծելի, մերժելի է օտարակալության դժնի լուծը:

«Հորդորակը» թարգմանիչ Պ. Խաչատրյանը վիթխարի աշխատանք է կատարել՝ արդի հայերենով մատուցելու այդ նշանավոր երկասիրությունը, որի մասին շատ է խոսվել հայ պատմագիտության մեջ, քայց և որը հազվագյուտ մարդկանց է ծանոթ եղել, որովհետև այն ունեցել է ընդամենը մեկ հրատարակություն (Մադրաս, 1772 թ.): Թարգմանությունը մեծապես շահում է նաև այն արժեքավոր ծանոթագրություններից, որոնք տրմնացան և բարեխիղճ աշխատությանը կազմել է Պ. Խաչատրյանը, որպեսզի ծամահակակիցներս կարողանանք լիովին հստակ պատկերացում կազմել և ըմբռնել երևույթներ, տերմիններ, դեմքեր, հասկացություններ և այլն, որոնք սլծմ

դժվարըմբռնելի և երբեմն էլ անհասկանալի կարող են լինել: Կարևոր է և այն, որ հնարավորության սահմաններում, թարգմանիչը հայտնաբերել և մատնանշել է այն սղքյուրներն ու երկերը, որոնք օգտագործվել են «Հորդորակում»: Այդ շնորհակալ և պատասխանատու աշխատանքը ավելի է բարձրացնում հրումնցնող գործի գիտական ու տեսական նշանակությունը: Ծանոթագրություններում կատարված են նաև բազմաթիվ նշգրտումներ հայագիտության արդի նվաճումների հիման վրա, որոնք սմեկնիկն չեն նետմացնում «Հորդորակի» արժեքը, քանզի այն գտնվում էր իր ժամանակի հայագիտության նվաճումների մակարդակի վրա, որը դեռ իր առաջին քայլերն էր կատարում այդ սասարեզում:

«Հորդորակի» առաջին չորս գլուխները՝ «Մաղթանքներիցս հետո երգ, ուղղված հայկազն Էրիտասարդներին ու պատանհաններին՝ բթափելելու համար ծուլության քնի վեներտտ և սնհոգ թմբությունից», «Հորդորական երգ՝ բաջուլերելու համար հայկազուններին, մանավանդ նրանց նորարողոջ ու ծաղկափոխ երիտասարդներին ու պատանհաններին», «Հորդորական և աղչական երգ, ներքուքար սաված մեղ ազգակիցների համար» և «Գոհություն և շնորհակալություն մեր ելեղեցու առաջնորդներին, բոլոր վարդապետներին, քահանաներին և համայն պաշտոնյաներին», գրված են հանգավորված հորինվածքով: Ինչպես խիստ ճորբամտորեն նկատում է թարգմանիչ Պ. Խաչատրյանը, «Այդ ոտանավորը որոշ վեռապանումներով կարելի է դիտել որպես հանգավոր արձակ, որին հատուկ են հայրենասիրական ու հրապարավախոսական շեշտն ու հուզակաբուրունը, բանաստեղծական արվեստի առավելապես ճարտասանական միջոցները՝ հոեառական բացականչությունը, հարցումն ու հորդորը, ինչպես նաև քառակրկնությունները, համեմատություններն ու հակադրությունները» (էջ 197): Անետեսպելի է, որ այս պարագան ուժեղացնում է «Հորդորակի» ազդեությունը ընթերցողների վրա, տոգորում նրանց հայրենասիրական ոգեշնչմամբ, լիովին դուրըմբռնելի դարձնում նպատակը, որին կոչված էր ծառայելու այդ անկրկնելի երկը:

Խոսքն ուղղելով հայկազն երիտասարդներին ու մանուկ սերնդին, որոնց ջանքերով պետք

Է իրականացնող հայրենիքի ազատագրումն ու վերակերտումը, նրա ապագա ազատ ու անկախ գոյությունը, «Հորդորակը» առաջադրում է իր հիմնադրություններից մեկը՝ անցյալի գիտակցված իմացության անհրաժեշտությունը:

**Ուստի և մենք պարտավոր ենք
անապարել և անցյալը
առնել իբրև մեզ օրինակ,
Որ չլինենք փրկությունից բոլորովին
զուրկ և անմասն
և ապիկար,
Որպես գերի ստորադասված
Ճառագեղով օտարների՝
հավետ անվարձ, տարապարտուց:
Չխորհելով բնավ, սովոր չլինելով
ազատության համար առիթ
կամ ժամանակ իսկ գտնելու:**

(էջ 8—9)

Անցյալի իմացության անհրաժեշտությունն գիտակցումով է ներծծված հինգերորդ գլուխը՝ «հացատրություն հայոց թագավորության և իշխանության մասին»: Հայոց պատմության իմացության առաջնահերթ խնդիրն է՝ գիտեցնել «մեր մեծահամբավ թագավորական իշխանության մասին, որ կորցրել ենք իսպառ, և որ շատերին օրեթե անծանոթ է», իմունալ «զորավոր կտրիճների ու արիների վարքը և, դրանց միջոցով հասու դառնալով նրանց գործերին, իրենք ևս ջանային հետևել իրենց անխնայներին» (էջ 54), «բարի հիշատակ դառնալ և քաջությանը ու արիությանը հասնել ու նըմանվել մեր նախնայաց որդիներին» (էջ 55): Սա հնարավորություն կընձեռնի «... ետ ստանալու մեր սեփական և արդար ծառուցությունը, որ կորցրել ենք մեր անկարգության ու ծուլության պատճառով: Այն, ինչ որ անգիտությամբ կորցրինք, այսուհետև մեր պարտքն է (և դրան ողորհանուր իրադրությունն էլ է մղում) վերստին ստանալ խոհեմությամբ ու արիությամբ» (էջ 55): 54—104 էջերն ընդգրկող այդ մտավորն գլխում, որը ժամանակագրական հատմով ներառում է Ջրհեղեղի ավանդությունից մինչև Հայկական կիլիկյան թագավորության կործանումը և դրան հավելում հայկական մասնավոր իշխանությունների գոյատևումը Արցախում XVIII դարի Էրկրորդ կեսին, կարմիր թելի պես այն միտքն է անցնում, որ հայ ժողովուրդը ունեցել է թագավորություններ, այսինքն՝ պետականություն, և տվել է քազում նշանավոր պետական գործիչներ, որոնք բարձր են պահել պետականության դրոշը և ազգային արժանապատվությունը: Ընդ որում, այդ գլխի ընդհանուր առմամբ չոր ու ցամաք շարադրանքի մեջ ստանձնացվում են նշանավոր գահակալները և նրանց ժամանակների իրադարձությունների ավելի հանգամանալի և արժեքավորող, ազգային զգացմունքները շոյող շարադրանք է տրվում:

հայոց որքան էլ կարևոր է սեփական պատմության իմացությունը, նույնքան և անհրա-

ժեշտ է բուն հայրենիք հասկացության նյութի մեջ մտնող, այսինքն՝ ծրարությունը այն աշխարհագրական տարածքի և վարչատարածքային բաժանումների հետ, որոնց գրկում ընթացել է հայ ժողովրդի պատմական կյանքն ու զարգացումը: Այդ խնդիրն է ծառայում «Հորդորակի» վեցերորդ գլուխը՝ «Այն մասին, թե այժմ ում իշխանության տակ է Հայոց պիտանքը, նաև մանրամասն տեղեկություններ, թե հայերը քանի նահանգ և գավառ ունեն»: Հետաքրքիրն այն է, որ «Հորդորակը» չի սահմանափակվում սույն մեծ Հայքի սելջուկների և գաղտնիների թվարկումով, այլ ընդգրկում է Փայր Հայքն ու կիլիկիան ևս, այսինքն բոլոր այն երկրները, որտեղ ընթացել է հայոց պետական կյանքը: հայց...

**Արդ, հնամյա երկրից հայոց
երջանկությունն**

**ու վայելանքը վերացան,
Որովհետև արիաբար չջանացինք
մենք հետևել
սուրբ հայրերի ու մեր նախնայաց
վարք ու կարգին,
Այլ ծուլությամբ ու հեշտությամբ
թույլ տվեցինք,
որ կերակուր դառնա ամեն ինչ
Գայլերին՝**

**Չիմանալով, որ վերստին դժվար է շատ
ես ստանալ
այն, ինչ անցել է ուրիշին: (էջ 21)**

Իսկ ի՞նչն էր պատճառը, որ ժամանակին ընդարձակածավալ, սեփական բավականին զորեղ պետություն ունեցող Հայաստան սելջուկների ընկավ օտարամուտ ցեղերի տիրակալության տակ, կորցնելով և՛ պետականությունը, և՛ հայրենիքը, որը 18-րդ դարում բաժան-բաժան էր սրված Արևելքի երկու բըղ-նապետությունների՝ Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև: «Ստեղծության և անմիաբանության պատճառով չէ՛, արդյոք, որ պարսն ժամանակ մեզ տիրել են սպազգիները» (էջ 104), հետտորակա հարց է դնում «Հորդորակի» հեղինակը: Անշուշտ, օտարակալության լուծը իր հետ բերում է ազգային խանձարձակ ճեղքում՝ ն հարկային սնողող կեղերում: Այս խնդրի լուսաբանման է նվիրված երկասիրության ութերորդ գլուխը՝ «Այն հարկերի քանակի մասին, որ ամեն տարի օտարներն ինքան կարողանում՝ բռնությանը պահանջում են հանապազ մեր ազգից ու Հայոց աշխարհից»: Այստեղ հարցն այն չէ, թե որքանով են հավաստի հեղինակի մտաւոր հաշվարկումները. հարցն այն մերկապարանոց ճշմարտության մեջ է, որ հայ ժողովուրդը տքնում ու մաստախկում էր օտարի համար, որը՝ ոչ միայն հափշտակում և յուրացնում էր հայ ժողովրդի արյուն-քրտինքով ըստեղծված բարիքը, այլև անարդում էր նրան:

Ահա այս պատմական, աշխարհագրական, տնտեսական հենքի վրա է կառուցված երկասիրության յոթերորդ, կասեցնող հիմնական,

գլուխը՝ «Այն մասին, թե ինչու կործանվեց հայոց իշխանությունը և գլխավորապես ինչ կարծիքներ կան այդ մասին»: Այստեղ Ս. Գըրքից բերված, բայց փիլիսոփայորեն մեկնաբանված, քաղվածքների միջոցով խիստ հետաքրքիր և արդարացի դրույթներ են առաջադրված: Հայոց պետականության կորստի առաջին և գլխավոր պատճառը հեղինակը համարում է այն, որ «մեր իշխանները ձգտեցին լինել ինքնիշխան, այսինքն՝ կամեցան ունենալ անկախ իշխանություն, որպեսզի (ամեն մեկն), ինչ որ ըստ սեփական խելքի, կարծիքի ու ըմբռնման կամենա անի՝ առանց մյուսի հետ խորհրդակցելու» (էջ 129—130): Այստեղ, ըստ էության, քննադատվում է ոչ միայն ավատատիրական ժամանակներին ներհատուկ կենտրոնախույս ձգտումների ու տարանջատվածության անկախության փաստը, այլև միանեծանության սկզբունքը, որովհետև կառավարման այդ ձևի հետևանքով թույլ տրված էր: ըր, ինչպես քիչ անց բացատրում է հեղինակը, կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ ամբողջ երկրի ու ազգության համար: Այստեղից էլ բխում է կառավարության լավագույն ձևի հիմնահարցը. ո՞րն է այն ըստ հեղինակի: «Իշխանությունը ինչ որ միմիայն մեկի դատողությանն ու կառավարմանը չպետք է ենթակա լինի, այլ ամենալավագույնը կլինի, եթե իշխանությունը անխախտելի սահմանադրությամբ և անեղծունելի օրենքներով կախում ունենար ընտիր-ընտիր ու մեծամեծ խորհրդակազմներից և տեսակ-տեսակ խորհրդարաններից: Այդ դեպքում միայն իշխանը կարող էր ժողովրդի հանդեպ ամեն մի խղճմտանքից ազատ լինել և երջանկորեն վայելել իր երկիրը, որի շնորհիվ երկիրը կլինի խաղաղ ու բարեկարգ վիճակում» (էջ 132): Անկասկած է, որ այստեղ առաջ է քաշվում սահմանադրական միապետության հարցը, խորհրդարանով հանդերձ, իբրև կառավարման լավագույն ձև: Անկասկած է և այն, որ որպես այդպիսի պետության նախատիպ՝ վերցվում է Անգլիան, որին հնդկահայերը քաջածանոթ էին: Այդ առումով հարկ է նշել, որ «Հորդորակը» առաջին քաղաքական երկն էր հայ իրականության մեջ, որտեղ կարևորվում էր սահմանադրության և խորհրդարանի անբաժնի շտապությունը՝ միաբնեծանության աղետաբեր ծայրահեղություններից խուսափելու և երկիրը բարեկարգ վիճակում պահելու համար: Հայկական պետականության կործանման մյուս պատճառներն էին համարվում՝ (2) հիմարությունն ու տգիտությունը, (3) ներքին երկպառակություններն ու գոտությունները, (4) փոխադարձ ատելությունը, (5) անհոգությունը, անփութությունը և ծուլությունը, (6) օրինազանցությունը, կամակորությունն ու անհնազանդությունը, (7) ուսումնաստացությունն ու տգիտությունը: Այստեղից էլ այն հորդորները, որոնք արվում են երրորդ գլխում, որպեսզի կրթվեն ու լու-

սավորվեն, որովհետև ուսումն ու կրթությունը, յուսուցիչ ազդեցություններ են հաղթահարելու վերջ թվարկված արատները և ընթանալու ազատության բաղձույի ճանապարհով:

«Հորդորակը» չի մոռանում գոռուցանել, որ դուրսով կորցրածը վերստին ետ ստանալը շատ դժվարին գործ է, որ ազատության ուղին տուժալից կլինի, բայց այն կենսական անհրաժեշտություն է, որովհետև ձեռք բերած ազատությունից «հրձվելու ենք բազմապատիկ սովելի շատ» (35):

«Հորդորակի» հեղինակը չի մոռանում նաև սրժանին հատուցել հայ եկեղեցուն, քանզի աշխարհիկ իշխանության կորստից հետո եկեղեցին եղավ այն հաստատությունը, որ միավորեց հայ ժողովրդին, նախանձախնդիր եղավ հայ ազգության պահպանմանը: Մի դարաշրջանում, երբ ազգությունը բնութագրող կարևորագույն բաղկացուցիչն էր համարվում դավանանքը, դավանական պատկանելությունը, ինքըստինքյան հասկանալի են դառնում դրավատանքի այն խոսքերը, որոնք ուղղված են հայ եկեղեցու սպասավորներին, թուրք այն բարձրատիճանն ու շարքային հովիվներին, որոնք լինելով միակ նշնուկն ու հաստատությունը հայեցի կրթությանն ու դաստիարակության գործում, աստար կանգնեցին ազգապահպանմանը: Աստված հոգևորականների միջոցով «տակավին... մխիթարում է, որ հույսով ու հավատով սպասենք մենք սպագային» (էջ 52):

Ինչպես ընթերցողը նկատել է արդեն, գրախոսականում ոչ մի անգամ չհիշատակվեց «Հորդորակի» հեղինակի անունը, թեև բավականին լայն տարածում ունի այն կարծիքը, որ հեղինակը Մովսես Բաղդասյանն է: Բայց և չպետք է մոռանալ, որ կան նաև այն տեսակետը պաշտպանողներ և հիմնավորողներ, որ հեղինակը Հակոբ Ծախաբյանն է: Բանն այն է, որ գրքի տիտղոսաբերումը նշված է. «Ե: խանդաղատական տարփանօք տպագրեցեալ ջանիք և ծախիք Զակոբայ Ծախիբեան Կեղեցիոյ, աշխատութեամբ Մովսեսի Բաղդասյան հրահանգչին իրոյ»: Ամբողջ թյուրքմբլանն և տարակերթութունների հինք հանդիսացել է, առաջին հերթին, տիտղոսաբերողը: Գրքի մեթոդն, սակայն, «Խոսք համայն հայ բարեպաշտ ընթերցողներին» հատվածում, հստակ կերպով ասված է. «... Ես՝ հայրենյաց կարտոով տարվածս, թուրքից նկատու, անյիկեր պատանխ և հայոց մեծամեծների սպասավորս, հայտնում եմ և հետևյալը, որպեսզի իմանան, թե ով է սույն գրքի շարահորդն ու տպագրողը, որը պատշաճ չհամարեց սկզբում իրեն հիշատակել, որ դրանով նրանց՝ բանիբուն մատենագիրների շարքը դասված չկարծիք: Ըստ իր նվաստության պահեց նրանց պատիվը, որ շարունակ մտքում ունի, և որը հարկադրեց նրան հիշվել արձե՛նավերջում, սույն գրքի ավարտում, և մեր

Գախնի մատենագիրների մեջ հանդես գալ որ-
 պես Գրանց ոտքերից թոթանկված փոշի և ա-
 մենքի ոտքի կոխան: Նա Հակոբ Նորջուղա-
 յեցին է...»: Այնուհետև նա շարունակում է.
 «Խորհելով որևէ պիտանի բան կատարել մեր
 անձկալի ազգի համար, որքան որ խեղճն ձե-
 ողմասս եմ, ավելի բարի բան, քան այս, ինչ-
 պես ինքս եմ կարծում, շկարողացա հնարել:
 Մեծ ջանասիրությամբ և անդադրում աշխա-
 տանքով դրան ձգտելով՝ ինձ օգնության կան-
 չեցի հանուր խնդրանքները կատարողին և
 բոլոր բարությունների մշտաբախ աղբյուրին՝
 Հոգին Սուրբ Աստծուն, որը եկավ հասավ՝
 ոռոգելով իմ բաղձանքների ծարաված ու չո-
 րացած, խոնավագուրկ ու պուպակած անդաս-
 տանը և այդպիսով ինձ ուժ տվեց ու կազ-
 դուրեց, մինչև որ իմ վաստակով ու ծախսով
 այս վիճակում կարողացա ավարտի հասցնել
 սույնը՝ իմ աշխատակցի, այն է՝ Մովսես Բաղ-
 ուսմյանի հետ միասին, որին և նախապես
 սկզբնավորության մեջ հիշատակեցի» (էջ
 174—175): Հիշյալ երկարաշունչ մեջբերումը
 վկայում է միայն այն մասին, որ «Հորդորա-
 կի» ամբողջական գաղափարը և նպատակա-
 ուղղվածությունը բխում է միայն և միայն Հա-
 կոբ Ծախամիրյանից: Եթե հաշվի առնենք նաև
 այն գաղափարական աղետները, որ ունի հե-
 ղինակի հարցում միևնույն բախտին արժա-
 նացած «Ռոդայթ» Փառացի» հետ «Հորդորա-
 կը», ապա կարծում ենք, որ Գրանց երկուսի
 էլ հեղինակը Հակոբ Ծախամիրյանն է, որին
 գուցեև Գյուլեթի հավաքման և լեզվական մը-
 շակման հարցում օգնել է Մովսես Բաղրամ-
 յանը: Հակոբ Ծախամիրյանի կարճակյաց լի-
 նելը (նա մահացել է 1774 թ. 29 տարեկան
 հասակում) դեռևս հիմք չէ կարծելու, որ երի-
 տասարդի գրչի տակից նման աշխատություն
 չէր կարող դուրս գալ: Գուցեև ընդհակառա-
 կը, հենց երիտասարդ հայրենասերն էր ի վի-
 ճակի նման գործ ստեղծել: Եվ ոչ էլ լուրջ
 կովան կարող է ծառայել այն պարագան, որ
 Սիմեոն Երևանցի հայրապետը բանադրել է
 Մովսես Բաղրամյանին, որովհետև ինքնըս-
 տինքյան հասկանալի է, որ նույնիսկ Ամենայն
 հայոց կաթողիկոսը հազիվ թե հանդգներ բա-
 նադրելու մեծահարուստ և համբավավոր Ծա-
 խամիր Ծախամիրյանի որդուն: Նկատենք, որ
 «Հորդորակի» աշխարհաբար թարգմանիչ Պ.
 Խաչատրյանը հակված է՝ երկուսին էլ հեղի-
 նակներից համարել (տե՛ս էջ 198—199):

Ունենք նաև մի երկու փոքրիկ դիտողու-
 թյուն: Առաջին գլխի 10-րդ ծանոթագրության
 մեջ թարգմանիչը գրում է, որ «գիրք ասելով
 «Նոր տետրակի» հեղինակը, թերևս, նկատի
 ունի կամ Ս. Գիրքը, կամ էլ Ծնորհալու
 վիպասանությունը, որին, ինչպես երևում է

«Հիշատակարանի» մեր 5-րդ ծանոթագրությու-
 նին, նա ծանոթ է եղել» (էջ 190): Կարծում
 ենք, որ այստեղ, ինչպես և ամբողջ շարա-
 դրանքի մեջ, «գիրք» ասելով, ընդ որում
 բոլոր սեղերում էլ այն գրելով գլխատառով,
 ի նկատի է առնված Ս. Գիրքը կամ Աստվա-
 ծաշունչը, Ներսես Ծնորհալու Վիպասանությու-
 նը այստեղ գործ չունի: 2որրորդ գլխի 1-ին
 ծանոթագրության մեջ գրված է. «Հուլիմներ—
 խոսքը հոգևոր առաջնորդների, եպիսկոպոս-
 աների մասին է» (էջ 197): Ոչ միայն. հուլիվ է.
 հոգևոր իմաստով, և՛ քահանան, և՛ եպիսկո-
 պոսը: Արդեն իսկ չորրորդ գլխի խորագիրը՝
 «գոհություն և շնորհակալություն մեր եկեղե-
 ցու առաջնորդներին, բոլոր վարդապետներին,
 քահանաներին և համայն պաշտոնյաներին»,
 ցույց է տալիս, որ հուլիվներ ասելով հեղի-
 նակը նկատի ունի բոլոր թվարկվածներին:

Ութերորդ գլխի 45-րդ ծանոթագրության մեջ
 (էջ 258) ուսուցիչն համարված է պարսեկական
 դրամական միավոր, մինչդեռ այն հնդկական
 է և հիշատակվում է տեքստում համեմատու-
 թյան կարգով, որպեսզի հնդկահայերի համար,
 մասնավորապես, ավելի հասկանալի լինի:

Ամփոփելով մեր խոսքը «Նոր տետրակի որ
 կոչի հորդորակի» հրատարակության առիթով,
 հարկ ենք համարում վերստին նշել, որ Պ. Մ.
 Խաչատրյանը բազմաշխատ և շնորհակալ գործ
 է կատարել՝ մեր երիտասարդության ուշա-
 դույրությունը հրավիրելով և նրա սեփականու-
 թյունը դարձնելով մի գիրք, որը 18-րդ դարի
 հայ քաղաքական և լուսավորական մտքի է-
 րախաչարհիքն է, մի երկասիրություն, որը հայ-
 րենասիրության, ազատասիրության և հայրենի
 պետականության վերականգնման ու պահ-
 պանման խանդաղատալից ջատագովությունն
 է: Դրվատանքի է արժանի և այն, որ գրքում
 գետեղված է նաև «Աշխարհացոյց Հայաստա-
 նայց» 1778 թ. Վեներտիկում Ծ. Ծախամիր-
 յանցի ծախքով, ի հիշատակ իր վաղամեռիկ
 անդրանիկ որդու՝ Հակոբ Ծախամիրյանի, հը-
 րատարակված քարտեզը:

Ամենացորդ հայրենասիրության ոգով ներ-
 ծրված հայ քաղաքական մտքի առաջնել
 «Նոր տետրակի որ կոչի հորդորակը» անանց
 սրժեք ներկայացնող երկասիրություն է, որը,
 թերևս ճակատագրի հեզմանքով, արդիական
 հնչողություն ունի նաև մեր օրերում, որպես
 բոլոր անույններով ազգային միասնության,
 բոլոր արտապիտ երևույթներից հրաժարման,
 բոլորանվեր հայրենասիրության մի հոգեցունց
 կոչնակ: Երկասիրության գրեթե բոլոր դը-
 րույթները առայսօր էլ հրատապ ու կենսա-
 կան անհրաժեշտություն են մեր երիտասար-
 դության համար:

Վ. Ա. ԴԻՆՅԱՆ